Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-390-22.11.2013-ՊԱ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Սույն օրենքի նպատակը և կարգավորման առարկան

1. Սույն օրենքի նպատակն է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի կայուն, համակարգված, իրավական, տնտեսական, սոցիալական, ինչպես նաև գիտական և գիտատեխնիկական կադրային քաղաքականության հիմքերի ստեղծումը և Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ու այլ զորքերի սպառազինման պետական, ինչպես նաև ռազմատեխնիկական հավակնոտ ծրագրերի իրականացումը:

2. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում ռազմարդյունաբերական քաղաքականության նպատակները, սկզբունքները և խնդիրները, ռազմարդյունաբերական համալիրի մեջ ընդգրկվող պետական և այլ մարմինների ու կազմակերպությունների միջև ծագող հարաբերությունները, ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորման և տեղադրման կարգը, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գների կարգավորման մեթոդաբանությունը:

Հոդված 2. Սույն օրենքի հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը.

1) **Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիր (այսուհետ՝ ՌԱՀ)՝** գիտական, գիտաարտադրական, արտադրական և այլ բնույթի կազմակերպությունների ու պետական մարմինների համակարգ, որի գործունեությունն ուղղված է պետության ռազմատեխնիկական քաղաքականության կենսագործմանը,

2) **ռազմատեխնիկական քաղաքականություն՝** պետության պաշտոնական տեսակետ և գործունեություն, որն ուղղված է խաղաղ և պատերազմական ժամանակ զինված ուժերը և այլ զորքերը ներհանրապետական ռազմական ապրանքով և գույքով բավարարման ապահովմանը,

3) **ռազմարդյունաբերական քաղաքականություն՝** ՌԱՀ-ի իրավական ու ռազմատնտեսական միջոցառումների և գործողությունների համակարգ, պետության անվտանգության ապահովման, ռազմատնտեսական մրցունակության և սոցիալ-տնտեսական զարգացման անհրաժեշտությունից ելնելով,

4) **ռազմարդյունաբերական քաղաքականության սուբյեկտներ՝** պետական մարմիններ և ռազմարդյունաբերական գործունեություն իրականացնող, անկախ կազմակերպական-իրավական ձևից, կազմակերպություններ,

5) **ռազմարդյունաբերական գործունեություն՝** ռազմական կարիքների համար պետական պատվերների հիման վրա սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմամթերքի, ռազմատեխնիկական միջոցների մշակման, արդիականացման, արտադրության, վերականգման, նորոգման, ծառայությունների մատուցման և սպասարկման աշխատանքների տնտեսական գործունեության ձևերի համակցություն,

6) **ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներ՝** իրավաբանական և ֆիզիկական անձիք, որոնք Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացնում են ռազմարդյունաբերական գործունեություն,

7) **ռազմարդյունաբերական կլաստեր՝** միմյանց լրացնող և մրցունակություն ապահովող ռազմական կարիքների համար պետական պատվերներ կատարող կազմակերպությունների փոխկապակցված խումբ,

8) **ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների պետական աջակցություն՝** պետական մարմինների

տնտեսական և իրավական բնույթի գործունեություն, որն ուղղված է ռազմական արդյունաբերության ապրանքների մատակարարման և ծառայությունների մատուցման արդյունավետության աճի խթանմանը,

9) **ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների աջակցության կազմակերպություններ՝** առևտրային և ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք ստեղծվում են ռազմարդյունաբերական գործունեության սուբյեկտներին աջակցություն իրականացնելու նպատակով, կամ ներգրավվում են այդ աշխատանքներին,

10) **ռազմական կարիքների համար պետական պատվեր՝** զինված ուժերը և այլ զորքերը ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների կողմից ներհանրապետական ռազմական ապրանքով և գույքով՝ սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով, ռազմատեխնիկական միջոցներով, ունեցվածքով և թիկունքային գույքով ապահովման գործառույթ,

11) **ռազմական ապրանք և գույք՝** ռազմական կարիքների համար պետական պատվերով մատակարարվող արտադրանք, մատուցվող ծառայություն և աշխատանք,

12) **ռազմական կարիքների համար պետական պատվերի պետական պատվիրատու (այսուհետ՝ պետական պատվիրատու)՝** Հայաստանի Հանրապետության օրենքով (օրենքներով) սահմանված լիազոր պետական կառավարման մարմին (մարմիններ),

13) **ռազմական ապրանքի և գույքի մատակարարման գլխավոր կատարող (այսուհետ՝ գլխավոր կատարող)՝** պետական պատվիրատուի հետ մատակարարման պայմանագիր կնքող իրավաբանական կամ ֆիզիկական անձ,

14) **ռազմական ապրանքի և գույքի մատակարարման մասնակից (այսուհետ՝ կատարող)՝** գլխավոր կատարողի (կատարողի) հետ ռազմական ապրանքի և գույքի մատակարարման պայմանագիր կնքող իրավաբանական կամ ֆիզիկական անձ,

15) **մատակարարվող ռազմական ապրանքի և գույքի բնութագիր՝** մատակարարվող ռազմական ապրանքի և գույքի մարտավարա-տեխնիկական բնութագրեր, պահանջներ և հատկանիշներ,

16) **ռազմական կարիքների համար պետական պատվերի հիմնական ցուցանիշ՝** ընթացիկ ֆինանսական տարվա և պլանային ժամանակահատվածի համար պետական բյուջեով հաստատված ռազմական կարիքների համար պետական պատվերի ֆինանսական ապահովման չափը,

17) **ռազմական կարիքների համար պետական պատվերի պայմանագիր (այսուհետ՝ պետական պայմանագիր)՝** ռազմական ապրանքի և գույքի մատակարարման համար պետության անունից պետական պատվիրատուի կողմից կնքված պայմանագիր,

18) **ՌԱՀ-ի նյութական միջոցների պետական պահուստ՝** պետության կողմից կազմակերպված (ինչպես զինված ուժերում, այնպես էլ ՌԱՀ-ի կազմակերպություններում) պահուստ, որտեղ ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված հատուկ ցանկի, կուտակվում և թարմացվում են ՌԱՀ-ում օգտագործվող նյութական արժեքները (նյութեր, հումքեր, էլեկտրոնային և օպտոէլեկտրոնային տարրեր, համալրող պատրաստվածքներ և այլն),

19) **հավակնոտ ծրագիր՝** պետության անվտանգության ապահովման կամ տնտեսական զարգացման նպատակով երկրի գիտական, տնտեսական, ֆինանսական, ինչպես նաև այլ հնարավորությունների համախմբմամբ նորագույնի ստեղծման ծրագիր,

20) **ՌԱՀ-ի ամփոփ ցուցակ (ռեեստր)՝** ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն պարունակող ցուցակ,

21) **ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող բազային կազմակերպություն՝** կազմակերպություն, որը իր կառավարման ներքո ունի համապատասխան ուղղության կամ ոլորտի գործունեության ապահովման համար անհրաժեշտ բացառիկ արտադրական և տեխնիկական կարողություններ, ինչպես նաև որակյալ գիտական, ինժեներական և միջին մասնագիտական կադրեր:

Հոդված 3. Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական քաղաքականության նպատակը, սկզբունքները և խնդիրները

1. Ռազմարդյունաբերական քաղաքականության նպատակն է՝

1) ռազմարդյունաբերության վերածումը տնտեսության կարևորագույն և առաջատար ոլորտի, որը կապահովի սեփական պաշտպանական կարիքները ոչ միայն կարճաժամկետ, այլև

երկարաժամկետ հեռանկարում՝ ստեղծելով ռազմական անվտանգության ապահովման և տարածաշրջանային հավասարակշռության պահպանման իրական երաշխիքներ:

2. Ռազմարդյունաբերական քաղաքականության սկզբունքներն են՝

1) ռազմարդյունաբերական քաղաքականության և ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների շահերի համակցումը,

2) ռազմարդյունաբերության ոլորտում գիտության և տեխնիկայի ժամանակակից ու նորարարական տեխնոլոգիաների հետևողական օգտագործումը,

3) պետական կառավարման և տնտեսական ինքնակարգավորման միջոցների ներդաշնակումը,

4) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների զարգացման բարենպաստ պայմանների ստեղծման համար պետական պատասխանատվությունը,

5) ռազմարդյունաբերական քաղաքականության ձևավորման, իրականացման, ինչպես նաև իրավական ակտերի նախագծերի փորձաքննության գործում ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների ներկայացուցիչների մասնակցությունը,

6) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների համար պետական աջակցության մատչելիությունը, հավասար պայմանների ապահովումը:

3. Ռազմարդյունաբերական քաղաքականության խնդիրներն են՝

1) գիտելիքահենք և ժամանակակից արտադրությունների համար հնարավորությունների ստեղծումը,

2) տարածաշրջանային և միջազգային տնտեսական գործընթացներին ինտեգրվելը,

3) Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման, զորահավաքային նախապատրաստության և զորահավաքային պահանջմունքների բավարարումը:

4) Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական ներուժի ավելացման միջոցով ռազմատեխնիկական գործընկերության և համագործակցության հաստատում շահագրգիռ պետությունների հետ:

Հոդված 4. ՌԱՀ-ի նպատակը և խնդիրները

1. ՌԱՀ-ի նպատակն է՝

1) ռազմատեխնիկական քաղաքականության իրագործումը, ռազմարդյունաբերության կայուն և նորարարական զարգացումը,

2) հայրենական մրցունակ ռազմական արդյունաբերության ստեղծումը և զարգացումը, որպես տնտեսության բաղկացուցիչ մաս,

3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության և անվտանգության նպատակով ձեռքբերվող ռազմական ապրանքների և գույքի առավելագույնս մատակարարումը ՌԱՀ-ի կազմակերպություններից,

4) ՌԱՀ-ի արտադրանքի արտահանման խթանման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը,

5) ռազմական դրության պայմաններում զինված ուժերի և այլ զորքերի զորահավաքային պահանջմունքների բավարարումը:

2. ՌԱՀ-ի խնդիրներն են՝

1) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների պետական կառավարման ապահովումը,

2) ՌԱՀ-ի գործունեության արդյունքում շրջակա միջավայրի պաշտպանությունը,

3) բնակչության զբաղվածության ապահովումը, նոր աշխատատեղերի ստեղծումը,

4) ռազմարդյունաբերական քաղաքականության սուբյեկտների շահերի համաձայնեցումը,

5) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների պետական օժանդակության առաջնահերթությունների որոշումը,

6) ռազմարդյունաբերական գործունեության տարբեր ոլորտների ներդաշնակ զարգացումը,

7) նյութական, ֆինանսական, աշխատանքային միջոցների և բնական պաշարների արդյունավետ օգտագործումը,

8) ռեսուրսախնայող տեխնոլոգիաների ներդրումը,

9) ռազմավարական հումքերի, նյութերի և էլեկտրոնային դետալների պետական պահուստի ստեղծումը,

10) ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորումը, հաստատումը և տեղադրումը,

11) ռազմական ապրանքների և գույքի գների պետական կարգավորումը,

12) ռազմական կարիքների համար պետական պատվերի բնագավառում մենաշնորհից պաշտպանվածության ապահովումը,

13) ռազմարդյունաբերական գործունեության խթանումը,

14) ռազմարդյունաբերական քաղաքականության սուբյեկտների պետություն-մասնավոր ընկերակցություն համագործակցության կարգավորումը,

15) ռազմական դրության պայմաններում զինված ուժերի և այլ զորքերի զորահավաքային առաջադրանքների կատարումը:

ԳԼՈՒԽ II
ՌԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ և ՆՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 5. Հայաստանի Հանրապետության Նախագահը

1. Հայաստանի Հանրապետության Նախագահը հաստատում է՝

1) ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարությունը,

2) ՌԱՀ-ի զարգացման պետական ծրագիրը,

3) Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովի կանոնադրությունը և կազմը:

Հոդված 6. Հայաստանի Հանրապետության կառավարությունը

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) մասնակցում է ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարության մշակմանը և ապահովում դրա կատարումը,

2) Նախագահի հաստատմանն է ներկայացնում ՌԱՀ-ի զարգացման պետական ծրագիրը և ապահովում է դրա կատարումը, առաջարկություններ է ներկայացնում ՌԱՀ-ի զարգացման պետական ծրագրում փոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ,

3) հաստատում է՝

ա. ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորման կարգը,

բ. ռազմական կարիքների համար պետական պատվերը,

գ. ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող բազային կազմակերպությունների ցանկը,

դ. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների վերաբերյալ ամփոփ ցուցակի մշակման և վարման՝ քարտագրման համակարգի ներդրման, ինչպես նաև ՌԱՀ-ի ամփոփ ցուցակում ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների գրանցման կարգը,

ե. ռազմական ապրանքների և գույքի գների պետական կարգավորման մեթոդները, դրանց կիրառման առանձնահատուկ մեխանիզմները և ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրման գնի որոշման կարգը,

զ. պատվիրատուի ներկայացուցչության (ներկայացուցչի) կողմից ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման որակի հսկողության կարգը,

է. պետական պահուստում կուտակման ենթակա՝ ՌԱՀ-ում օգտագործվող, նյութական արժեքների ցանկի մշակման կարգը,

ը. ՌԱՀ-ի կազմակերպությունների գիտաարտադրական ձեռքբերումների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման և վարման կարգը,

թ. Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության հատուկ գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման կարգը,

ժ. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պետական աջակցության առաջնահերթությունները և աջակցման ձևերը, ըստ ռազմատեխնիկական և ռազմարդյունաբերության քաղաքականության,

ժա. պետական պահուստում կուտակման ենթակա՝ ՌԱՀ-ում օգտագործվող, նյութական արժեքների ցանկի մշակման և վարման կարգը,

ժբ. ռազմական կարքների համար պետական պատվեր կատարող կազմակերպությանը բազայինի կարգավիճակ տալու կարգը,

ժգ. գիտական և գիտատեխնիկական արդյունքների պետական հաշվառման կարգը:

4) սահմանում է՝

ա. ռազմական կարիքների համար պետական պատվերի հիմնական ցուցանիշները,

5) ֆինանսավորում է ռազմատեխնիկական քաղաքականության իրականացման գիտահետազոտական աշխատանքները,

6) ռազմարդյունաբերության զարգացման հարցերով իրականացնում է միջազգային համագործակցություն,

7) կազմակերպում է ՌԱՀ-ի մասին ամենամյա զեկույցի լսումներ՝ ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին պետական աջակցության բյուջետային միջոցների օգտագործման, ինչպես նաև ֆինանսական, տնտեսական, սոցիալական ու ռազմարդյունաբերության զարգացման այլ ցուցանիշների վերլուծության, ՌԱՀ-ի զարգացմանն ուղղված միջոցառումների արդյունավետության գնահատման և ՌԱՀ-ի զարգացման կանխատեսումների վերաբերյալ,

8) համակարգում է ռազմարդյունաբերության քաղաքականության միջոցառումների կատարման պետական կառավարման մարմինների գործունեությունը,

9) ստեղծում, վերակազմակերպում և լուծարում է ռազմարդյունաբերության պետական կոմիտեն, ռազմարդյունաբերական բնագավառի այլ պետական մարմիններ, կազմակերպություններ, ռազմագիտատեխնիկական հաստատություններ,

10) իրականացնում է ռազմարդյունաբերական բնագավառում օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 7. Ռազմարդյունաբերության պետական կոմիտեն

1. Ռազմարդյունաբերության պետական կոմիտեն մշակում է՝

1) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պետական աջակցության ծրագրերի նախագծերը,

2) ռազմական կարիքների համար պետական պատվերի և դրա ձևավորման կարգի նախագծերը,

3) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների վերաբերյալ ամփոփ ցուցակի մշակման և վարման՝ քարտագրման համակարգի ներդրման, ինչպես նաև ՌԱՀ-ի ամփոփ ցուցակում ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների գրանցման կարգի նախագիծը ,

4) ռազմական ապրանքների և գույքի գների պետական կարգավորման մեթոդները, դրանց կիրառման մեխանիզմները և ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրման գնի որոշման կարգի նախագիծը,

5) պատվիրատուի ներկայացուցչության (ներկայացուցչի) կողմից ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման որակի հսկողության կարգի նախագիծը,

6) պետական պահուստում կուտակման ենթակա՝ ՌԱՀ-ում օգտագործվող, նյութական արժեքների ցանկի մշակման և վարման կարգի նախագիծը,

7) ՌԱՀ-ի կազմակերպությունների գիտական, գիտաարտադրական և արտադրական ձեռքբերումների միասնական տեղեկատվական համակարգի ստեղծման և վարման կարգի նախագիծը,

8) Հայաստանի Հանրապետությունում ռազմական նշանակության հատուկ գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման կարգի նախագիծը,

9) ռազմական պետական պատվերի հիմնական ցուցանիշների նախագիծը,

10) ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող կազմակերպությանը բազայինի կարգավիճակ տալու կարգի նախագիծը,

11) ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող բազային կազմակերպությունների ցանկի նախագիծը,

12) գիտական և գիտատեխնիկական արդյունքների պետական հաշվառման կարգի նախագիծը,

13) յուրաքանչյուր պետական պայմանագրի արդյունքների ֆինանսատնտեսական

գործունեության առանձին հաշվառման կարգի նախագիծը:

2. Ռազմարդյունաբերության պետական կոմիտեն իրականացնում է՝

1) ՌԱՀ-ի բնագավառի մասնագետների վերաբերյալ տեղեկատվական բազայի վարում,

2) ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարումը,

3) ՌԱՀ-ի ոլորտային ծրագրերը,

4) ռազմարդյունաբերական և ռազմատեխնիկական քաղաքականության ռազմավարության իրականացման համար պատասխանատու պետական մարմինների հետ համագործակցություն,

5) ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող բազային կազմակերպությունների կայուն գործունեության ապահովումը,

6) ռազմական կարիքների համար պետական պատվերի պայմանագիր կնքած կազմակերպության դիմումը ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպությանը գրանցում է ՌԱՀ-ի ամփոփ ցուցակում,

7) կազմակերպությունների զորահավաքային նախապատրաստության աշխատանքների և առաջադրանքների կատարումը,

8) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների միջև համագործակցության կազմակերպումը,

9) ռազմարդյունաբերական կլաստերների ստեղծումը,

10) ռազմարդյունաբերության ոլորտում նորմատիվ-իրավական և նորմատիվ-տեխնիկական բազայի ստեղծումը,

11) ռազմական արտադրանքի որակի հսկողությունը,

12) ռազմարդյունաբերական բնագավառի միասնական տեղեկատվական համակարգի ձևավորումը,

13) ռազմատեխնիկական համագործակցություն,

14) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների ամփոփ ցուցակի վարումը,

15) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների պետական աջակցության ծրագրերը,

16) զենքի արտադրության լիցենզիա տալու լիազոր մարմնի գործառույթը,

17) 50% և ավելի պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների կառավարումը,

18) ռազմարդյունաբերական բնագավառում օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Հոդված 8. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների իրավունքներն ու պարտականությունները

1. Ռազմարդյունաբերական քաղաքականության ապահովման գործընթացում ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտները իրավունք ունեն.

1) պետական մարմինների քննարկմանը ներկայացնել առաջարկություններ ՌԱՀ-ի զարգացման վերաբերյալ,

2) Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված կարգով, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցել և առաջարկություններով հանդես գալ Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովի նիստերում:

2. Ռազմարդյունաբերական քաղաքականության ապահովման գործընթացում ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտները պարտավոր են ռազմարդյունաբերական քաղաքականության իրականացման գործընթացում իրենց զարգացման և հզորությունների պահպանման ամենամյա ծրագրերը ներկայացնել Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովին:

Հոդված 9. Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովը

1. Հայաստանի Հանրապետության վարչապետը ի պաշտոնե հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովի նախագահ:

2. Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովը մշտապես գործող խորհրդակցական մարմին է, որը մշակում է առաջարկություններ և ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ընթացք տալու նպատակով, դրանք են՝

1) Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական քաղաքականության իրագործման, ՌԱՀ-ի զարգացման և գործունեության վերաբերյալ,

2) ռազմարդյունաբերական քաղաքականության սուբյեկտների գործունեության վերաբերյալ,

3) ռազմական կարիքների համար պետական պատվերների հաստատման և փոփոխման վերաբերյալ,

4) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին աջակցման պայմանների և կարգի վերաբերյալ, ըստ ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտների զարգացման ծրագրերի,

5) ռազմական կարիքների համար պետական պատվերի գնի որոշման կարգի սահմանման վերաբերյալ:

3. Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովը իրեն կից ունի ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհուրդ, որը մշտապես գործող մարմին է և ուսումնասիրում է գործադիր մարմիններից ստացված ռազմական կարիքների համար պետական պատվերների հայտերը, ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներից ստացված բոլոր առաջարկություններն ու համապատասխան եզրակացությամբ ներկայացնում ռազմարդյունաբերական հանձնաժողովին:

4. Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի կանոնադրությունն ու կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

5. Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդի նախագահին նշանակում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

6. Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովն ապահովում է ՌԱՀ-ի խնդիրների իրականացումը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ԳԼՈՒԽ III
ՌԱՀ-ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄԸ

Հոդված 10. ՌԱՀ-ի զարգացման ծրագիրը

1. ՌԱՀ-ի զարգացման ծրագիրը ընդգրկում է՝

1) ՌԱՀ-ի զարգացման ուղղությունները, ըստ գործունեության ձևերի,

2) ռազմարդյունաբերական արտադրանքի որակի ցուցանիշների համադրումը ստանդարտներին,

3) ՌԱՀ-ի զարգացման միջոցառումները,

4) ՌԱՀ-ի արտադրանքի մրցունակության բարձրացման միջոցառումները,

5) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին պետական աջակցման ենթակառույցների զարգացման միջոցառումները,

6) ռազմարդյունաբերության ոլորտում կադրերի պատրաստման միջոցառումները,

7) ՌԱՀ-ի պետական կառավարման և ինքնակարգավորման կատարելագործման միջոցառումներ:

ԳԼՈՒԽ IV
ՌԱՀ-ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 11. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին պետական աջակցությունը, ձևերը և պայմանները

1. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին պետական աջակցությունը իրենից ներկայացնում է՝

1) ֆինանսական, իրավական, գույքային, տեղեկատվական, խորհրդատվական ապահովումը,

2) նորարարական տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունից ելնելով ֆինանսական վարձակալության (լիզինգ), ինչպես նաև հավատարմագրային կառավարման մեխանիզմների օգտագործմամբ համապատասխան գործունեության իրականացմանն օժանդակությունը,

3) կադրերի պատրաստումը, վերապատրաստումը և որակավորման բարձրացումը,

4) անմիջական և այլ ձևերի օժանդակությունը ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին, որոնք իրականացնում են նաև այլ գործունեություն:

2. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին ֆինանսական աջակցությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից՝ առանձին ծրագրերի իրականացման, ինչպես

նաև պետական հատուկ նպատակային հիմնադրամների ստեղծման միջոցով:

3. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին գույքային աջակցությունն իրականացվում է անշարժ կամ շարժական պետական գույքը ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին անհատույց օգտագործման իրավունքով կամ հավատարմագրային կառավարման հանձնելու միջոցով, որոնք պետք է օգտագործվեն ըստ նպատակային նշանակության՝ համապատասխան պայմանագրերի կնքման միջոցով:

4. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին նորարարական աշխատանքների կազմակերպման աջակցությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետությունում նորարարական աշխատանքների չափորոշիչներ սահմանելով, որն իրականացվում է հետևյալ ձևերով՝

1) ՌԱՀ-ի գործունեության մասնագիտացված կազմակերպություններում տեխնոպարկերի, ապրանքների և տեխնոլոգիաների առևտրայնացման կենտրոնների ստեղծմամբ, անկախ կազմակերպական-իրավական ձևից,

2) ՌԱՀ-ի գիտարտադրական կազմակերպություններում նորարական տեխնոլոգիաների ներդրման գործունեության ապահովմամբ,

3) հայտնագործությունների, օգտակար մոդելների, ռազմարդյունաբերական նմուշների, ինչպես նաև ռազմարդյունաբերական գործունեության սուբյեկտների մտավոր արդյունքների հաշվառմամբ,

4) ներդրումային հիմնադրամների կամ ազատ տնտեսական գոտիների ստեղծմամբ,

5) վարչարարական ընթացակարգերի պարզեցմամբ,

6) այլ միջոցառումների իրականացմամբ:

5. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին տեղեկատվական և խորհրդատվական աջակցությունն իրականացվում է՝

1) տեղեկատվական համակարգի ստեղծմամբ,

2) ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին տնտեսագիտական, իրավական, արտադրատեխնոլոգիական, վիճակագրական, մարկետինգային տեղեկատվությունների տրամադրմամբ:

6. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին կադրերի պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման աջակցությունն իրականացվում է կադրերի պատրաստման պետական կրթական չափորոշիչների և դրանց հիման վրա մասնագիտական կրթական համապատասխան նյութական բազայի ստեղծման ծրագրերի հաստատմամբ, ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին ուսումնամեթոդական և գիտամեթոդական օժանդակությամբ:

7. Արտաքին տնտեսական գործառույթներ իրականացնող ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին պետական աջակցությունն իրականացվում է՝

1) միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների հետ ռազմարդյունաբերության զարգացման բնագավառում համագործակցությամբ,

2) արտաքին շուկաներում տեղական արտադրության ապրանքների արտահանման, այլ պետություններում մտավոր գործունեության արդյունքների արտոնագրային իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ պայմանների ապահովմամբ,

3) համապատասխան պետական մարմիններում մասնագիտացված կառույցների ստեղծմամբ և գործունեության ապահովմամբ:

8. ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին այլ աջակցությունը կարող է իրականացվել քաղաքացիական ապրանքների արտադրության և պետական կարիքների համար ծառայությունների մատուցման պատվերների տեղադրմամբ:

ԳԼՈՒԽ V
ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ, ՀԱՍՏԱՏՈՒՄԸ և ՏԵՂԱԴՐՈՒՄԸ

Հոդված 12. Ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորումը

1. Ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորման հիմք են հանդիսանում՝

1) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի զարգացման ծրագրերը,

2) Հայաստանի Հանրապետության զինված ուժերի և այլ զորքերի սպառազինության և ռազ-

մական տեխնիկայի զարգացման պետական ծրագիրը (պետական սպառազինման ծրագիր),

3) Հայաստանի Հանրապետության պաշտպանության և անվտանգության նպատակային պետական ծրագրերը,

4) Հայաստանի Հանրապետության հանրապետական զորահավաքային ծրագրերը,

5) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան ռազմատեխնիկական համագործակցության ծրագրերը և պլանները,

6) Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը և անվտանգությանը վերաբերվող Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերը, կարգադրությունները և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումները:

2. Ռազմական կարիքների համար պետական պատվերը ձևավորվում է, ըստ ռազմական կարիքների համար պետական պատվերի հիմնական ցուցանիշների: Ռազմական կարիքների համար պետական պատվերի հիմնական ցուցանիշների վերաբերյալ առաջարկությունները մշակվում են՝

1) պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիրը կազմելիս,

2) պետական պատվիրատուների առաջարկությամբ հերթական ֆինանսական տարվա և պլանային ժամանակահատվածի պետական բյուջեի նախագիծը կազմելիս:

3. Ռազմական կարիքների համար պետական պատվերում կարող են ընդգրկվել՝

1) սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների, ունեցվածքի և թիկունքային գույքի մշակման, ստեղծման, արդիականացման, նորոգման (վերականգման), նորոգում արդիականացմամբ, սպասարկման և այլ աշխատանքները,

2) կազմակերպությունների արտադրատեխնոլոգիական, կոնստրուկտորական և հետազոտական աշխատանքների բազայի զարգացման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսության զորահավաքային նախապատրաստության աշխատանքները,

3) սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների, ունեցվածքի և թիկունքային գույքի, ինչպես նաև նյութերի, հումքերի, համալրող պատրաստվածքների մատակարարումը,

4) շահագործումից հանված սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների և ունեցվածքի օգտահանումը,

5) շահագործումից հանված սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների և ունեցվածքի օգտահանման համար տեխնիկական վերազինման աշխատանքները,

6) Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորություններին համապատասխան ռազմատեխնիկական համագործակցության բնագավառում ապրանքների մատակարարման աշխատանքները,

7) Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման համապատասխան, ՌԱՀ-ում օգտագործվող նյութական արժեքների, պետական պահոցում կուտակման համար ապրանքների մատակարարումը,

8) Հայաստանի Հանրապետության անվտանգության նպատակով այլ ապրանքների մատակարարումները՝ սահմանված սույն հոդվածի առաջին մասի համապատասխան:

Հոդված 13. Ռազմական կարիքների համար պետական պատվերի հաստատումը

1. Յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի հաստատումից հետո Հայաստանի Հանրապետության կառավարությունը մեկ ամսվա ընթացքում հաստատում է ռազմական կարիքների համար պետական պատվերը, ըստ կատարման ժամանակացույցի և միջոցառումների:

2. Պետական պատվիրատուների ցանկը՝ ըստ պատվերների, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը ռազմական կարիքների համար պետական պատվերի հաստատման ընթացքում:

3. Ռազմական կարիքների համար պետական պատվերը կարող է փոփոխվել ռազմական պետական պատվերի հիմնական ցուցանիշների սահմաններում, պայմանավորված ռազմական պետական պատվերի կատարման իրական ընթացքից և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի մասին օրենքում փոփոխություն կատարվելուց:

Հոդված 14. Ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրումը

1. Հայաստանի Հանրապետությունում արտադրված ու գինված ուժերի և այլ զորքերի սպա-

ռազինություն ընդունված սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների, ունեցվածքի և թիկունքային գույքի ձեռքբերման համար ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրման համար ներկայացվող մրցույթային փաստաթղթերում նշվում է ապրանքի անվանումը կամ ապրանքային նշանը:

2. Ռազմական կարիքների համար պետական պատվերի գինը որոշվում է մրցույթի միջոցով:

3. Մեկ տարուց ավելի ժամկետով մատակարարվող ռազմական ապրանքների և գույքի մատակարարման գնի փոփոխությունը իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումով՝ ռազմական կարիքների համար պետական պատվերի ընթացիկ տարվա փոփոխությունների կատարման կամ հերթական տարվա ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրման ընթացքում:

4. Ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրման ժամկետները, պետական պատվերի կազմում հաստատվող նյութատեխնիկական ռեսուրսների ցանկի և ծավալների ձևավորման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ԳԼՈՒԽ VI
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱՏՈՒԻ, ԳԼԽԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂԻ, ԿԱՏԱՐՈՂԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 15. Պետական պատվիրատուի իրավասությունները

1. Պետական պատվիրատուն՝

1) գլխավոր կատարողների (կատարողների) ներգրավմամբ ներկայացնում է ռազմական ապրանքի և գույքի մատակարարման ծավալների և նրա հիմնական ցուցանիշների վերաբերյալ առաջարկություններ,

2) կազմակերպում և իրականացնում է ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրումը՝ Հայաստանի Հանրապետության գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով,

3) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցառումներ պետական պայմանագրով նախատեսված պայմանների և մատակարարվող ռազմական ապրանքին և գույքին ներկայացվող պահանջների կատարման ուղղությամբ,

4) պետական պայմանագրի պայմաններին համապատասխան կատարում է վճարումներ,

5) գլխավոր կատարողի նկատմամբ իրականացնում է հսկողություն ռազմական ապրանքի և գույքի մատակարարման համար հատկացրած բյուջետային միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման ուղղությամբ,

6) իրականացնում է հսկողություն պետական պայմանագրի պահանջներին համապատասխան ռազմական ապրանքի և գույքի մատակարարման ժամկետների և որակի նկատմամբ,

7) ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման ընթացքում մասնակցում է սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների, ունեցվածքի և թիկունքային գույքի փորձնական նմուշների, հատային և սերիական արտադրված ապրանքների խմբաքանակների, համալրող սարքերի և նյութերի փորձարկումներին, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում կարող է պահանջել իրականացնելու լրացուցիչ փորձարկումներ,

8) գլխավոր կատարողի հետ կազմակերպում և անցկացնում է սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների, ունեցվածքի և թիկունքային գույքի փորձնական նմուշների պետական փորձարկումներ,

9) իրականացնում է հսկողություն ռազմական ապրանքի և գույքի որակի նկատմամբ՝ պետական պատվիրատուի կողմից սահմանած նորմատիվ իրավական և այլ ակտերի համապատասխան,

10) հաստատում է սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների, ունեցվածքի և թիկունքային գույքի ստեղծման և սերիական արտադրության համար անհրաժեշտ տեխնիկական փաստաթղթեր,

11) իրականացնում է գիտական և գիտատեխնիկական արդյունքների պետական հաշվառում,

12) պետական պայմանագրերում նախատեսում է համալրող մասերի, հումքի և նյութերի

առաջանցիկ գնումների համար միջոցներ,

13) սահմանում է գլխավոր կատարողի կողմից հաշվետվության ներկայացման կարգ՝ պետական պայմանագրի ուժի մեջ գտնվելու ամբողջ ժամանակահատվածի համար,

14) իրականացնում է պատվիրատուի ներկայացուցչության (ներկայացուցչի) կողմից ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման որակի համապատասխանության հսկողություն:

Հոդված 16. Գլխավոր կատարողի իրավասությունները

1. Գլխավոր կատարողը՝

1) ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորման (ճշգրտման) ընթացքում, պետական պատվիրատուի հարցումով, կատարողների մասնակցությամբ հիմնավորում է ապրանքի գինը, սահմանում է ապրանքի մատակարարման կարգը և ժամկետները (ամբողջովին և առանձին փուլերով), որոշում է կատարողների կազմը, ֆինանսավորման ժամկետները և պայմանները,

2) պետական պայմանագրի պայմանների համապատասխան ապահովում է ապրանքի մատակարարումը,

3) կազմակերպում և անցկացնում է տեխնիկական փաստաթղթերով նախատեսված սպառազինության, ռազմական տեխնիկայի, ռազմատեխնիկական միջոցների, ունեցվածքի և թիկունքային գույքի փորձնական նմուշների, հատային և սերիական արտադրված ապրանքների խմբաքանակների (համալիրների, համակարգերի), ինչպես նաև համալրող սարքերի և նյութերի փորձարկումներ,

4) ապահովում է ռազմական ապրանքի և գույքի համապատասխանությունը պետական պատվիրատուի կողմից ներկայացված պահանջներին,

5) ապահովում է մատակարարվող ռազմական ապրանքների և գույքի որակը՝ պետական պատվիրատուի նորմատիվ և իրավական այլ ակտերի ու փաստաթղթերի պահանջներին, ինչպես նաև պետական պայմանագրի պայմաններին համապատասխան,

6) ապահովում է պետական պատվիրատուի իրավասու մարմնի կողմից պետական պայմանագրի կատարման հսկողությունը,

7) պետական պատվիրատուի պահանջով տեղեկատվություն է ներկայացնում պետական պատվիրատուի իրավասու մարմնին ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման ընթացքում կատարված ծախսերի վերաբերյալ,

8) պետական պատվիրատուին է ներկայացնում կատարողների հետ համատեղ պատրաստված պետական պայմանագրի գնի փոփոխման անհրաժեշտ հիմնավորում: Պետական պայմանագրի գնի ավելացման դեպքում ներկայացնում է նաև ծախսերի կրճատմանն ուղղված միջոցառումների ցանկ,

9) պետական պատվիրատուի հետ համաձայնեցնում է ռազմական կարիքների համար պետական պատվերի շրջանակներում մեկ այլ տնտեսվարող սուբյեկտի հետ աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման, սարքավորումների, համալրող մասերի, նյութերի, հումքի ձեռքբերման պայմանագրերի կնքումը՝ եթե կնքվող պայմանագրերի ընդհանուր գինը գերազանցում է պետական պայմանագրով մատակարարվող ապրանքի գնի 20%-ը,

10) պետական պատվիրատուին տեղեկացնում է ՌԱՀ-ի ամփոփ ցուցակում գրանցված ու 50% և պակաս պետական բաժնեմաս ունեցող ռազմական կարիքների համար պետական պատվեր կատարող կազմակերպության արտադրական հզորությունների կրճատման, վերացման կամ աշխատանքի բնույթի փոփոխման վերաբերյալ՝ եթե հերթական տարվա և պլանային ժամանակաշրջանում բացակայում կամ դադարեցվում է ռազմական ապրանքի և գույքի մատակարարման ռազմական պետական պատվերը,

11) գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մրցույթի արդյունքների հիման վրա պայմանագրի կնքումից հետո 5-օրյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով, դիմում է ներկայացնում լիազոր մարմին՝ ՌԱՀ-ի ամփոփ ցուցակում գրանցվելու համար:

Հոդված 17. Կատարողի իրավասությունները

1. Կատարողը՝

1) ապահովում է մատակարարվող ռազմական ապրանքի և գույքի, այդ թվում համալրող մասերի և նյութերի համապատասխանությունը պայմանագրով նախատեսված պահանջներին,

2) կազմակերպում և անցկացնում է տեխնիկական փաստաթղթերով նախատեսված համալրող մասերի ու նյութերի, փորձնական նմուշների, հատային և սերիական արտադրված ապրանքների խմբաքանակների փորձարկումներ,

3) ապահովում է մատակարարվող ռազմական ապրանքների և գույքի որակը՝ պետական պայմանագրի պահանջներին համապատասխան,

4) ապահովում է գլխավոր կատարողի և իրավասու մարմնի կողմից պետական պայմանագրի կատարման նկատմամբ հսկողության իրականացումը, այդ թվում նաև պայմանագրի կատարման առանձին փուլերում,

5) գլխավոր կատարողի պահանջով ներկայացնում է կատարված պայմանագրի իրականացված ծախսերի մասին տեղեկատվություն,

6) իրականացնում է օրենքով սահմանված պայմանագրի կատարման համար անհրաժեշտ այլ գործողություններ:

ԳԼՈՒԽ VII
ՌԱԶՄԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԳՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Հոդված 18. Ռազմական ապրանքների և գույքի գների պետական կարգավորման նպատակները և սկզբունքները

1. Ռազմական ապրանքի և գույքի գնի պետական կարգավորման նպատակն է պահպանել պետական պատվիրատուի և գլխավոր կատարողի (կատարողի) շահերի հարաբերակցությունը, որը նպատակաուղղված է՝

1) բյուջետային միջոցների արդյունավետ օգտագործմանը,

2) ռազմական կարիքների համար պետական պատվերի արդյունավետ տեղադրմանը,

3) պետական պայմանագրի ժամանակին և որակյալ կատարման համար իրական պայմանների ստեղծմանը:

2. Ռազմական ապրանքի և գույքի գնի պետական կարգավորումը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրման և կատարման համար բոլոր մասնակիցների շահերի իրավական ապահովման,

2) ռազմական ապրանքի և գույքի մատակարարման ծախսերի նվազեցման,

3) մատակարարման ապրանքի շահութաբերության ապահովման,

4) գլխավոր կատարողի և կատարողի կողմից իրականացվող ծախսերի հիմնավորվածության,

5) հակամենաշնորհային կարգավորման միջոցների կիրառման,

6) պետական պատվիրատուի և գլխավոր կատարողի (կատարողի) շահերի հավասարակշռության պահպանման:

Հոդված 19. Մատակարարվող ռազմական ապրանքների գների պետական կարգավորման մեթոդները

1. Ռազմական ապրանքի և գույքի գնի պետական կարգավորումը անմիջականորեն իրականացվում է՝

1) մրցույթի միջոցով ռազմական կարիքների համար պետական պատվերի տեղադրման սկզբնական (առավելագույն) գնի որոշման կանոնակարգով,

2) ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորման համար ապրանքի գնի հաշվարկի մեթոդական ուղեցույցի ներդրմամբ և կիրառմամբ,

3) ռազմական ապրանքների և գույքի գնահաշվարկի կառուցվածքում ապրանքի արտադրության և իրացման ծախսերի հաշվառմամբ,

4) ռազմական ապրանքների և գույքի գների պետական կարգավորման առանձնահատուկ

մեխանիզմների կիրառմամբ,

5) շահույթի չափերի որոշմամբ, հաշվի առնելով ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման համար գլխավոր կատարողին (կատարողին) անհրաժեշտ արտադրական հզորությունների պահպանման ու զարգացման միջոցները, ինչպես նաև ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման նպատակով պետության կողմից ցուցաբերած ֆինանսական աջակցությունը,

6) գլխավոր կատարողին (կատարողին) ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման համար տնտեսապես հիմնավորված գնի վճարման ապահովմամբ,

7) ռազմական ապրանքների և գույքի գնի պետական հաշվառմամբ,

8) ռազմական կարիքների համար պետական պատվերի ձևավորման, տեղադրման և կատարման ժամանակ ապրանքի գնի ընդունման նկատմամբ պետական հսկողության իրականացմամբ,

9) գլխավոր կատարողի (կատարողի) կողմից յուրաքանչյուր պետական պայմանագրի (պայմանագրի) ֆինանսատնտեսական արդյունքի առանձին հաշվառմամբ:

ԳԼՈՒԽ VIII
ՌԱԶՄԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Հոդված 20. ՌԱՀ-ի գործունեություն սուբյեկտների տնտեսական մրցակցության պաշտպանության պահանջները

1. ՌԱՀ-ի գործունեության ոլորտում տնտեսական մրցակցության պաշտպանության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են տնտեսական մրցակցության պաշտպանության մասին ՀՀ օրենսդրությամբ:

2. Ռազմական կարիքների համար պետական պատվերի կատարման շրջանակներում, գլխավոր կատարողը (կատարողը) պարտավոր է ներկայացնել պետական պատվիրատուին տեղեկություն մատակարարների (կատարողների, կապալառուների) կողմից նյութերի, համալրող սարքավորումների, սարքավորումների, հումքի, ինչպես նաև աշխատանքի (ծառայության), գնային բոլոր բարձրացումների մասին, եթե առաջարկվող գինը ավելի քան 5%-ով գերազանցում է այն գնին, որը հաշվարկված է հաշվի առնելով որոշված գների ինդեքսը:

3.Ռազմական պետական պատվերի կատարման շրջանակներում կատարողի կողմից նյութերի, համալրող սարքավորումների, հումքի, աշխատանքի (ծառայության) գնի բարձրացման դեպքում մատակարարը պարտավոր է գնի բարձրացման պահից սկսած 10 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնել պետական պատվիրատուին՝ վերջինիս կողմից հաստատված ձևին համապատասխան:

ԳԼՈՒԽ IX
ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 22. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Ռազմարդյունաբերական համալիրի մասին»
ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
ՀՀ կառավարություն	1. Նկատի ունենալով ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ օրենքի նախագծի /ւսյսուհետ՝ նախագիծ/ 6-րդ հոդվածը խմբագրել, քանի որ տվյալ դեպքում խոսքը պետք է գնա ՀՀ Նախագահի կողմից ռազմաարդյունաբերական և ռազմատեխնիկական բնագավառին վերաբերող իրավական ակտեր ընդունելու մասին՝ համաձայն ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի և նախագծի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի դրույթների: 2. Նախագծի 15-րդ, 16-րդ և 17-րդ հոդվածներով սահմանվում են պետական պատվիրատուի, գլխավոր կատարողի և կատարողի պարտականությունները: Այս առումով անհրաժեշտ է նախագծում նախատեսել նաև դրույթներ վերջիններիս իրավունքների վերաբերյալ: 3. Նախագծի 21-րդ հոդվածում «խախտման համար կրում են» բառերը փոխարինել «խախտումներն առաջացնում են» բառերով:	Ընդունվել է, Ընդունվել է, Ընդունվել է մասամբ,	5-րդ հոդվածը խմբագրվել է (նախկին 6-րդ հոդված) նշված հոդվածները խմբագրվել են Օրենքի խախտման համար պատասխանատվություն նախատեսող 22-րդ հոդվածը հանվել է:
ՀՀ ԱԺ պատգամավոր Արտակ Զաքարյան	1. «Ռազմարդյունաբերական համալիրի մասին» ՀՀ օրենքի նախագծի ողջ տեքստում, բոլոր հոդվածներում հանդիպող «ռազմական պետական պատվեր» և «ռազմական	1.Ընդունվել է,	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	ապրանք» բառակապակցությունները փոխարինել համապատասխանաբար «ռազմական կարիքների համար պետական պատվեր» և «ռազմական ապրանք և գույք» բառակապակցություններով դրանց բոլոր հոլովույթներով:		
	2. 4-րդ հոդվածի 3-րդ կետում ավելացնել նոր 4)-րդ ենթակետ հետևյալ խմբագրությամբ «<< ռազմարդյունաբերական պոտենցիալի ավելացման միջոցով ռազմատեխնիկական գործընկերության և համագործակցության հաստատում շահագրգիռ պետությունների հետ»	2.Ընդունվել է	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	3. 5-րդ հոդվածի 1-ին կետի 9)-րդ ենթակետում «էլեկտրոնային տարրերի» բառակապակցությունը փոխարինել «էլեկտրոնային դետալների» բառակապակ-ցությամբ:	3.Ընդունվել է,	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	4. 6-րդ հոդվածի 1-ին կետի 2)-րդ ենթակետում ստորակետից հետո ավելացնել «ինչպես նաև դրանցում արվող փոխություններն ու լրացումները» բառակապակցությունը:	4 Ընդունվել է,	<<Իրավական ակտերի մասին>> << օրենքի պահանջների համաձայն՝ համապատասխան մարմնի կողմից ընդունված ակտում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն նույն մարմնի կողմից և նույն ակտով:
	5. 7-րդ հոդվածի 1-ին կետի 3)-րդ ենթակետի բ. կետում «ծրագրերի» բառից հետո ավելացնել «ինչպես նաև դրանցում արվող փոփոխություններն ու լրացումները» բառակապակցությունը:	5. Ընդունվել է,	Կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	6. 10-րդ հոդվածի 2-րդ կետի 6)-րդ ենթակետում «ռազմարդյունաբերություն» բառը փոխարինել «ռազմարդյունաբերության ոլորտում» բառակապակցու-թյամբ: 7. 11-րդ հոդվածի 5-րդ կետի 1)-ին ենթակետում «կենտրոնների» բառից հետո ավելացնել «ստեղծմամբ» բառով և հանել նույն հոդվածի 5-րդ կետի 1)-ին ենթակետի վերջին «ստեղծմամբ» բառը: 8. 11-րդ հոդվածի 8-րդ կետի «գործունեություն» բառը փոխարինել «գործառույթներ» բառով: 9. 16-րդ հոդվածի 11-րդ կետում ամրագրված միտքը հասկանալի չէ, վերախմբավորման կարիք ունի՝ հետագայում տարընթերցումներից խուսափելու համար: 10. Ռազմարդյունաբերական քաղաքա-կանության արդյունավետ և նպատակային կառավարում իրականացնելու առումով, կարծում եմ, առավել նպատակահարմար կլինի, որպեսզի կազմավորվի համա-պատասխան ստորաբաժանում (կամ առանձնացված մարմին) ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում:	6. Ընդունվել է, 7. Ընդունվել է, 8. Ընդունվել է, 9. Ընդունվել է, 10.Ընդունվել է;	Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Կատարվել են համապատասխան փոփոխություններ: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:
ՀՀ Աժ պատգամավոր Կորյուն Նահապետյան	1. Նախագծի 2-րդ հոդվածից հանել 2-րդ մասը: 2. Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ մասի իրացման ապահովման առումով համապա-	Ընդունվել է, 2.Նախագծի 11-րդ հոդվածի 3-րդ մասը հանվել է:	2-րդ հոդվածը հանվել է: Միաժամանակ, խնդիրը կարգավորվում է «Զորահա-

	տասխան փոփոխություններ և լրացումներ կատարել հարկային և մաքսային օրենսդրության մեջ և սույն նախագիծը համալրել նշված ոլորտների համապատասխան օրենքներում փոփոխությունների և լրացումների մասին օրենքների նախագծերով: 3.Նախագծով պայմանավորված փոփոխություններ և լրացումներ կատարել նաև «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում: Նախագծի վերաբերյալ համակարգային խնդիրներ ու առաջարկություններ: ա. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի <<բ>> և <<գ>> ենթակետերում սահմանել գլխավոր կատարողներին սուբսիդիա տրամադրելու հստակ նեղ չափանիշներ ու պայմաններ: բ. Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասում խոսվում է, որ ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին ֆինանսական աջակցությունը	ա. Ընդունվել է,	վաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում և ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 22-ի N766-Ն որոշմամբ: «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում համապատասխան փոփոխություններին նպատակահարմար է անդրադառնալ հետագայում՝ 2015 թվականին իրականացվելիք պաշտպանական վերանայման 2-րդ շրջափուլի ընթացքում: Նախագծում ՌԱՀ-ի գործունեության սուբյեկտներին տրվող սուբսիդիաների և պետական երաշխիքների վերաբերյալ դրույթները հանվել են: Նախագծի 11-րդ հոդվածի 2-րդ մասում հստակ նշվում է, որ ֆինանսական աջակցությունն

	իրականացվում է ՀՀ պետական բյուջեից: Ամենամյա կտրվածքով ունենալ հստակ պլան ՌԱՀ-ի ոլորտում գործունեությունը ֆինանսավորելու համար:		իրականացվում է առանձին ծրագրերի իրականացման, ինչպես նաև պետական հատուկ նպատակային հիմնադրամների ստեղծման միջոցով:
	4. Նախագծի 15-րդ և 16-րդ հոդվածներում հղում է արվում <<Գնումների մասին>> ՀՀ օրենքին՝ ընդգծելով, որ ռազմական պետական պատվերի կատարումը իրականացվում է <<Գնումների մասին>> օրենքով: Մշակել ռազմական պետական գնումների գործընթացը կարգավորող ուղեցույց կամ կանոնակարգ, որը կփոխարինի հանրային ոլորտի գնումների գործընթացը ռազմական գնումների գործընթացի համար:	4.Ընդունվել է ի գիտություն:	Նախագծում ռազմական պետական պատվերի տեղադրման և գնումների իրականացման ընթացակարգերը հնարա-վորինս նախատեսվել են:
	5. Ռազմարդյունաբերական ոլորտի իրական արդյունավետությունն ապահովելու համար բացասական գործոն կարող է լինել իրական մրցակցային պայմանների բացակայությունը: Առաջարկվում է պետական ռազմական պատվերներ կատարող սուբյեկտների համար ներդնել առանձնահատուկ հարկաբյուջետային և վարկային քաղաքականության մեխանիզմներ ու մշակել այդ արտոնությունները տրամադրելու հստակ չափանիշներ:	5.Խնդիրը կարգավորվում է «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածում և ՀՀ կառավարության 2012թ. հունիսի 22-ի N766-Ն որոշմամբ:	
	6. Ռազմարդյունաբերական քաղաքականության իրականացումը կպահանջի կառավարման արդյունավետ համակարգի ձևավորում: Հանձնաժողովի	6.Ընդունվել է մասամբ,	Նախագիծը լրացվել է նոր 7-րդ հոդվածով, որում սահմանվում են ռազմարդյունաբերության պետական կոմիտեի իրավասությունները:

	փոխարեն ստեղծել ռազմարդյունաբերական համալիրի գործունեությունը համակարգող կառավարման մարմին, որն օժտված կլինի գործառնական լայն լիազորություններով: 7.Սահմանել արդյունավետ վերահսկողական մեխանիզմներ ռազմարդյունաբերության ոլորտի համար հատկացված պետական միջոցների ծախսման նկատմամբ և համապատասխան մեխանիզմներ ունենալ պետական ռազմական պատվերներ կատարող ընկերությունների կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:	7.Ընդունվել է ի գիտություն:	Նախագծում ռազմարդյունա-բերության ոլորտի համար հատկացված պետական միջոցների ծախսման նկատմամբ վերահսկողութ-յան ընդհանուր մեխանիզմ-ների վերաբերյալ դրույթներ նախատեսվել են:
ՀՀ Աժ պատգամավոր Գագիկ Ձհանգիրյան	1. Օրենքի նախագծի 9-րդ հոդվածի 1-ին մասը խմբագրման կարիք ունի: 2. Օրենքի նախագծի 10-րդ հոդվածի 1-ին մասը հանել:	Ընդունվել է, Ընդունվել է:	Կատարվել է համապատասխան փոփոխություն: 10-րդ հոդվածի 1-ին մասը հանվել է: